ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԷՍՏՈՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 16-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Էստոնիայի Հանրապետության նախագահ Առնոլդ Ռյույտելին և նրա գլխավորած պատվիրակությանը:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով Էստոնիայի Հանրապետության նախագահի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ներկայացրեց Հայ Առաքելական Եկեղեցու առաքելությունը մեր ժողովրդի կյանքում, ներկայիս եկեղեցական կյանքը: Նորին Սրբությունը մասնավորաբար անդրադարձավ օրեցօր զարգացող հայ-էստոնական հարաբերություններին, երկու ժողովուրդների ջերմ կապերին, որոնց հիմքում ընկած են քրիստոնեական բարձր արժեքները:

Ամենայն Հայոց Հայրապետը նաև իր գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնեց Էստոնիայի Հանրապետության իշխանություններին տեղի հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող հոգածության համար՝ ուրախությամբ արձանագրելով, որ բարելավվում է Էստոնիայում բնակվող հայերի ազգային-հոգևոր կյանքը:

Շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Հայրապետին ընդունելության համար՝ Առնոլդ Ռյույտելն իր ուրախությունը հայտնեց, որ գտնվում է հնագույն քրիստոնեական երկրում, որի ժողովուրդը շատ հյուրասեր է: Նա նշեց այն ընդհանրությունները, որ կան մեր երկու ժողովուրդների միջև՝ հույս հայտնելով, որ ապագայում էլ ավելի պիտի զորանան ու զարգանան տնտեսական և մշակութային կապերը մեր երկու երկրների միջև:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը, դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Բալթյան երկրներում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Հովակիմյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ